



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԵՐ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆՇԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼԻ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոններդ պահելու կերպը,
եւ շմբապէս պիտի կարարեմ գանոնք:
Տուր որ հասկնամ քու Օրէնքդ,
որպէսզի կարարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր:
Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ զիս,
որովհետեւ անոնցմէ հաճոյք կ'առնեմ:
Ըրէ այնպէս՝ որ սիրտս պարտիրաններուդ փափաքի,
քան անձնական հարստութիւն դիզելու:
Հայեացքս հեռացուր դարարկ բաներէն,
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:
Ես քու ծառայ եմ, կարարե ինձի Կուրս խոստումդ,
այն խոստումը՝ որ կու Կաս քեզմէ ակնածողներուն:
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,
որովհետեւ վճիռներդ արդար են:
Միակ փափաքս է՝ հրահանգներդ կարարել.
Կեանք Կուր ինձի, դուն՝ որ արդար ես:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ Բն հոգիանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ Բն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ Ա ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 4:1-6

ԶԱՆԱԶԱՆԵԼ ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽԱՔԷՈՒԹԵՆԷՆ (4:1-6)

Ինչպես Քրիստոս Իր աշակերպներուն զգուշացուց ըսելով. «Զգոյշ եղէք, չըլլայ որ մէկը ձեզ խաբէ, որովհետեւ շաքեր պիտի գան իմ անունովս եւ ըսեն՝ թէ՛ ՚Ես եմ Քրիստոսը՛, եւ պիտի մոլորեցնեն շաքերը (Մտրթ 24:4-5): ...Յետոյ բազմաթիւ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շաքերը մոլորեցնեն (Մտրթ 24:11): ...Սուտ քրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ մեծ հրաշքներ ու նշաններ կատարեն՝ որպէսզի մոլորեցնեն, եթէ կարենան, նոյնիսկ Աստուծոյ ընտելները: Ահաւասիկ ամէն ինչ սկիզբէն ըսի ձեզի (Մտրթ 24:23-25)»:

Ահա նոյն այս զգուշացումը Յովհաննէս Առաքեալ կ'ընէ հաւաքացեալներուն, որպէսզի իրենք եւս զգուշանան եւ զգուշացումով լսեն այն ինչ որ պարզամտներ կը փոխանցուին եւ սրուգենք եթէ երբեք Սուրբ Հոգիէն է, եւ կամ Նեռին հոգիով խօսուած:

Յովհաննէս Առաքեալ առաջին իսկ արքայապարտութեամբ կ'ըսէ. «Միտելիներ, մի՛ հաւաքաք ամէն մարդու՝ որ կ'ըսէ Աստուծոյ Հոգին ունի» (4:1): Հերաքրքրական արքայապարտութիւն մըն է: Ի՞նչ ընենք, ամէն ինչ հաւաքանք, ամէն մարդու հաւաքանք, եւ ի՞նչ են չափանիշները ըստ այնմ հաւաքալու: Կրնանք հանդիպիլ այնպիսիներու որոնք ամէն ըսուած խօսքի կը հաւաքան: Ուրիշներ՝ ընդհանրապէս ռեւէ մէկ բանի չեն հաւաքար: Առաքեալը պարզապէս չ'ըսէր, «մի՛ հաւաքաք ամէն մարդու», այլ՝ կը յարակեցնէ ըսելով. «Մի հաւաքաք ամէն մարդու՝ որ կ'ըսէ Աստուծոյ Հոգին ունի» եւ ըստ այնմ պարզամտներ կը փոխանցէ: Նախորդող հարուածով Առաքեալը ցոյց փուստ որ հաւաքացեալները Աստուծոյ Սուրբ Հոգին ունին, եւ անոր իբրեւ ապացոյց մեր Աստուծոյ հետ միացումը եւ սերը հանդէպ մեր նմանին: Բայց այսպէղ քիչ մը ատելի անդին կ'երթայ Յովհաննէս Առաքեալ այս անգամ մէկ այլ ուրիշ երեւոյթ մը պարզելու, որով ցոյց կը փրոյի եթէ երբեք Աստուծոյ Հոգիով կը խօսին թէ ոչ:

Յովհաննէս Առաքեալ նախ ամէն բանէ առաջ ընդհանրական երեւոյթ մը կը պարզէ ըսելով. «Փորձեցէք»: Իրաքանչիւր հաւաքացեալ պէտք է որ փորձէ, քննէ ըսուած խօսքը կամ պարզամտը, հոգ չէ թէ ով է ըսողը, եթէ նոյնիսկ հրեշտակ մը ըլլայ, որովհետեւ ճիշդ այս երեւոյթին մասին Պօղոս Առաքեալ Գաղատացիներուն գրած նամակին մէջ կ'ըսէ. «Ով որ մեր քարոզածէն փարբեր աւերարան մը քարոզէ ձեզի, ով ալ ըլլայ՝ նոյնիսկ մենք կամ երկինքէն հրեշտակ մը՝ անիծեալ ըլլայ» (Գաղ 1:8): Տակաւին, «Մեծ յօժարութեամբ ընդունեցին Աստուծոյ խօսքը եւ ամէն օր Սուրբ գիրքերը կը քննէին, փեսնելու համար թէ ճշմարի՛տ եւ Պօղոսի քարոզածները» (Գործք Առ 17:11): Ինչո՞ւ պէտք է փորձել, որովհետեւ. «բազմաթիւ սուտ մարգարէներ երեսն ելած են աշխարհի մէջ» (1 հմր): Ահա արդէն այդ սուտ մարգարէները ելած է: Ինչպէս կարելի է ճանչնալ զանոնք: Յովհաննէս Առաքեալ հետեւեալ մեթոդը կը սորվեցնէ ճանչնալու թէ արդեօք Աստուծոյ Հոգիով կը խօսին թէ ոչ: «Ով որ կը խոստովանի թէ Յիսուս Քրիստոս աշխարհ գալով իրապէս մարդացաւ՝ անիկա Աստուծոյ Հոգիով է որ կը խօսի» (2 հմր): Պարզ եւ յարակ:

1. Խոստովանութիւն: Կը նշանակէ միայն մտքիս մէջ փեղ գրած երեւոյթ մը չէ, այլ պէտք է որ ընդունիմ ու խոստովանիմ թէ Յիսուսը Քրիստոսն է, այսինքն՝ Մեսիան, Փրկիչը, Աստուծոյ Օծեալը:
2. Խոստովանիմ որ աշխարհ եկաւ:
3. Խոստովանիմ որ իրապէս, ճշմարտապէս մարդացաւ: Որովհետեւ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ մարդեղութեան մէջ կը կայանայ Անոր բերած փրկութիւնը: Եթէ ճշմարտապէս չէ մարդացած, ուրեմն կը նշանակէ չէ խաչուած, չէ մեռած, ու յարութիւն չէ առած: Ուրեմն կը նշանակէ մերժել Իր սերը, որովհետեւ այս բոլորը ըրաւ որպէս սիրոյ արքայապարտութիւն: Ինչպէս պիտի ըսէ Քրիստոս. «Գերագոյն սերը այն սերն է, որ մարդ իր կեանքը դնէ իր նմանին համար»:

Պօղոս Առաքեալ իր Կորնթացիներուն գրած նամակին մէջ այսպէս կ'ըսէ՝ «Ուստի կ'ուզեմ որ հասկնաք, թէ ուեւ մէկը որ Աստուծոյ Հոգիէն մղուած կը խօսի՝ չի կրնար ըսել՝ «Նզովեալ ըլլայ Յիսուս»։ Նոյնպէս ալ, ոչ ոք կրնայ խոստովանիլ թէ «Յիսուս Տէր է», եթէ Մուրթ Հոգին չունենայ» (Ա Կորնթ 12:3): Այլապէս, կը նշանակէ այդպիսին Աստուծոյ Հոգիով չէ որ կը խօսի, այլ Նեռին՝ Քրիստոսի հակառակորդին դրդումովը. որ արդէն աշխարհի մէջ է (3 հմբ): Ահա Չարին աշխարհաւաճելը եւ մեթօքը, ոչ թէ ըսելու «մի՛ հաւարաք Յիսուս Քրիստոսի», այլ՝ «հաւարացէք, բայց այս ձեռով»: Կամ այլափոխելու Քրիստոսի խօսքերը եւ ըստ այնմ ներկայացնելու, այնպէս ինչպէս ըրաւ Դրախարի պարտէզին մէջ: Կամ Մտթ 7:13-23. «Մընէք նեղ դռներն, քանի կորուստի փանող դուռը լայն է եւ ճամբան՝ ընդարձակ, եւ շարեր կը մըրնեն անկէ: Մինչ դէպի կեանք փանող դուռը նեղ է եւ ճամբան դժուարին, եւ քիչեր միայն կը գըրնեն գայն»: Անմիջապէս յետոյ կ'աւելցնէ ըսելով. «Զգուշացէք սուր մարգարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով կը մօտենան ձեզի, մինչ ներքնապէս յափշտակիչ գայլեր են»: Ահա նոյն մտահոգութեամբ Պօղոս Առաքեալ իր խօսքը ուղղելով Եփեսացիներուն պիտի ըսէ. «Իմ մեկնումէս ետք յափշտակիչ գայլեր պիտի մըրնեն ձեր մէջ, որոնք պիտի չխնայեն հօտին: Ձեր մէջէն եւս պիտի ելլեն մարդիկ, որոնք սխալ բաներ պիտի ուսուցանեն, հաւարացեալները իրենց ետեւէն փանելու համար» (Գործք 20:29-30):

Ահա այսօր, երբ կ'այցելենք այնպիսի փեղեր, ուր ժամանակ մը եկեղեցիները լեցուն հաւարացեալներով Աւերարանի քարոզութիւն փեղի կ'ունենար, բայց ալ այդ երեոյթը դադրած է, եւ այդ եկեղեցիները վերածուած են թանգարանի կամ արուստի կոթողներու: Պարճառը, որովհետեւ յափշտակիչ գայլեր ներս մըրնելով չխնայեցին հօտին: Արդեօք այն չէ պարճառը, երբ Քրիստոս Ինք եւս Իր նամակը կ'ուղղէ եկեղեցիներուն ըսելով. «Դժգոհ եմ, որովհետեւ զիս առաջուան պէս չես սիրեր: Դժգոհ եմ, որովհետեւ դուն քու շարքերուդ մէջ ունիս Բաղասամի վարդապետութեան հետեւորդներ: Դժգոհ եմ, որովհետեւ կը հանդուրժես Եզաբէլին, կնոջ մը՝ որ ինքզինք մարգարէուհի կը նկատէ» (Յայր 2-3 գլխ):

Նոյնիսկ սեր քարոզելով մոլորեցնելու, բայց ահա Յովհաննէս Առաքեալ այդ սերէն քիչ մը անդին կ'երթայ ցոյց փալու, թէ այդպիսիները ինչպէս կը բացապրեն եւ կ'ընդունին Յիսուս Քրիստոսին, մերժելով Անոր ճշմարիտ մարդեղացումը:

Յովհաննէս Առաքեալ 4-6 համարներով կու գայ ըսելու հետեւեալը.

1. Դուք Աստուծմէ ճնամ յաղթեցիք այդ սուր մարգարէներուն: Ի՞նչպէս կարելի է յաղթել: Որովհետեւ Աստուծոյ Մուրթ Հոգին աւելի մեծ է քան Նեռի հոգին: Դուք յաղթեցիք, որովհետեւ կրցաք ոչ ըսել այդ սուր մարգարէներուն ու անոնց քարոզներուն:
2. Անոնք աշխարհին կը պարկանին եւ աշխարհին ուզած ձեռով կը խօսին, աշխարհն ալ մտիկ կ'ընէ:
3. Մենք Աստուծոյ կը պարկանինք, իսկ ով որ զԱստուծոյ կը ճանչնայ մտիկ կ'ընէ մեզ: